

# ԲԱՐԻ ՊՏՈՒԴ

Յ. ԳԱՐԵՆԵՑՈՒ

## Ա.

Երկար ժամանակ ծառայում էր բիձայ Սարգիսը Դաւիթ աղայի դրանը և միշտ գոհ էր նորանից:

Նորա պաշտօնը շատ բարդ չէր: Դաւիթ աղայի բակն և զուռն էր աւելում առաւօտ-երեկոյ, բակի ներքին ծայրին շարունակ կապած գամփոներին էր կերակրում և տան առաջի ծաղկանոցն էր ջրում:

Բացի բիձայ Սարգիս՝ Դաւիթ աղայի բակումը շատ ծառաներ կային այլ և այլ պաշտօններով. խոհարար, կառավար, իրանց օգնականներ, լւացարար, աղախին, սենեկապան, սպասուհիք և այլն: Բիձայ Սարգիսը նոցա ոչ մէկի հետ յարաբերութիւն չ'ունէր. ճաշւայ որոշ ժամանակը միայն իւր բաժին մի տեսակ պարզ արգանակը սունանում և բերում էր իւր փոքրիկ դռնապանական խցիկումն ուտում և մինչեւ միւս օրը սպասաւորներից ոչ մէկի հետ չէր տեսնուում:

Շատ մաքրասէր էր բիձայ Սարգիսը, նա միայն իւր տիրոջ բակը չէր յստակ պահում. ողջ քաղաքումը ասելիք էր դառել Դաւիթ աղայննց փողոցի մաքրութիւնը. ասելը ձեռքին նա պատրաստ էր փողոցի ամենափոքրիկ ցեխն անգամ սրբելու:

Աղայական ինքնասիրութիւնը գոհ էր այդ բանից և բիձայ Սարգիսը երբեմնապէս արժանանում էր տիրոջ կողմից մի փոքրիկ շնորհքի: Դաւիթ աղան սովորութիւն էր արել կառքից իշնելու՝ ամիսը մի երկու անգամ, կիւրակէ օրերը, մի քանի կոպէկ սպիտակ փող նւիրել իւր դռնապանին, ասելով. քեզ արքայութիւն,

բիձայ Սարգի՛ս, լաւ ես զուլլուղ անում. էս մի քանի կոպէկը տա՛ր երեխաներիդ համար մրգեղէն ա՛ռ:

Սուտ չէր ատում Դաւիթ աղան. բիձայ Սարգիսը մեծ ընտանիքի տէր էր և շատ աղքատ. իւր չնչին ռոճիկն էր նրանց միակ ապրուսոր. Նեշտ բան չէ՝ եօթն աղջիկ և մի տղաց ունենալ, անդործ անբան, քաղաքի հեռու թաղերից մէկում՝ մի էժանագին կիսաւեր բլբլացքի տակ ժողոված:

Եթէ Սարգիս բիձայի պինդ կազմւածքը չը լինէր, դժւար էր նորան բազմաթիւ անմայր զաւակների հոգսի տակ չընկճւիլ. նորալծակից ամուսինը բաշխելով բիձայ Սարգախն վերջին արու զաւակը, ինքը երկինք գնաց՝ մարդին տոկունութիւն մաղթելու անտանելի ցաւերը կրելու համար:

Բիձայ Սարգսի ընտանեկան դրութիւնը անյայտ չէր իւր տիրութից և այդ պատճառով նորան իրաւունք էր տւել զիշերը շատ ուշ գնալ իւր զաւակների մօտ անցկացնել և առաւօտը շատ վաղ իւր գործին կենալ:

Բիձայ Սարգսի մաքրասիրութիւնը յագեցնում էր և տիկնոջ փառասիրութիւնը: Խնքնագոհ ժպիտով ծաղկահասակ տիկինը ներս էր կանչում բիձայ Սարգախն պարտէզ, երբ իւր բարեկամուհիների հետ ծաղկանոցի սեղանի վերայ, թէյի բաժակը ձեռքին, գովասանքներ էր լսում իւր սիրած պարտիզի կանոնաւորութեան համար հաճոյախօս հիւրերից:

— Ըհի՛, բիձայ Սարգի՛ս, քեզ բաղնիսի փող, ատում էր քնքշահայեաց տիրուհին, իմ սիրելի հիւրերը հաւանում են քո պարտէզը:

Սարգիսը խոնարհութեամբ ստանում էր սպիտակ փողը և հեռանում:

— Միտս բերես, որ այս իրիկուն քո աղջիկների համար շորացու էլ տամ, ձայն էր տալիս ետեից տիկինը, և Սարգսի տան հանգամանքը հիւրերին պատմում, աւելացնելով՝ թէ ինքն է նրանց հագցընում և խնամում:

— Գիտենք, գիտենք, մենք ճանաչում ենք քո ողորմած բնութիւնը՝ միմեանց աչքով էին անում հիւրերը, պատասխանելով իրանց մէծարող տանտիկնոջը:

Նշանացի խօսակցութիւնն անտեղի չէր. շաբաթը մի երկու

անդամ լսում էին շարունակ Դաւիթ աղայի կնոջից բիձայ Սարգսի աղջկանցը շորացու ուղարկելը. աղպահով նրանք ծալքերով հագուստ պէտք է ունենալին, այն ինչ բոլորը կիսամերկ էին:

Տիկինը, խօսք չը կայ, մոռանում էր իւր խոստումը և տարին մի երկու անգամ իւր սպասուհու հնոտիները ուղարկում էր Սարգսի բիձի աղջիկներին:

## Բ.

Գարնան գեղածիծաղ օրերից մէկում՝ Դաւիթ աղայի միակ որդի եօմբը տարեկան Վասիլը ման էր գալիս իւր օտարազգի դաստիարակչուհու հետ իրանց պարտիզում և ծաղիկներն անխնայ պոկտուելով շաղ էր տալիս գետնին:

Յանկարծ պարտիզի երկաթեալ վանդակների արտօաքին կողմից—բակից ցնցոտիների մէջ փաթաթւած իւր հասակակից մի երեխաց թոյլ ձայնով Վասիլի անունը տուց:

Վասիլը յետ նայեց, տեսաւ օտար մանուկին, մի խորթ հայեացք ձգեց նորա վերայ և շփոթւեց. երեի նա զզւանք կամ երկիւղ զգաց առաջին անգամը, որ շրմունքներն ուռեցրեց և փաթաթւեց դաստիարակչուհու հագուստի քղանցին. բայց նա կրկին սիրո առաւ անձանօթ երեխայի բաղցր նայւածքից, մօտ գնաց վանդակին և հարցրեց.

—Ո՞վ ես դու:

—Բիձայ Սարգսի տղան եմ, անվատահանց մանուկը, անունս էլ Արտեմ է:

Վասիլը թէև յաճախ խաղում էր բակումը, կամ պարտիզումը, բայց նա երբէք աեղեկութիւն չ'ունէր Սարգսի կամ Մարկոս բիձաների գոյութիւնից: Տանու ծառայք, արդարեւ, վիստում էին իրանց ներս ու դուրսը, բայց նորա ի՞նչ ցաւն էր ուշը դարձնել ստոր արարածների վերայ, կամ ո՞վ իրաւունք կը տար միակ պաշտելի զաւակին՝ ծնողական աշքերի լոյսին՝ ծառաների կամ աղախինների հետ ընկնել: Որդեսէր ծնողքը թոյլ ևս չէին տալիս Վասիլին խաղալ մինչև անգամ իրանց շրջապատող դրացի մանուկների հետ: Միակ խաղընկերը և երեխայի հետ յարաբերութիւն ունեցողը իւր Փրանսիացի դաս-

տիարակչուհին էր, որի պարտքն էր կատարել երեխայի ամենատեսակ հաճովքը և խօսել նորա հետ Փրանսերէն և ոռուսերէն:

—Դու ո՞վ ես, կրկնեց Վասիլլը հարցմունքը:

—Զեր դռնապան բիձայ Սարգսի տղան եմ, միթէ դու իմ հօրս չես ճանաչում, ձեր պարտէզն իմ հայրն է ջրում, այդ ծաղիկները իմ հօր ցանածն են. ընչո՞ւ ես կտրտում և թափում, ափսոս են, շարունակեց Արտեմը. եթէ դրանք քեզ պէտք չեն, ինձ բաշխի՞ր, ես կը տանեմ իմ քոյլերին:

—Տուն արի՛, կանչեց Վասիլլը:

—Ի՞նչ ես ասում, Վասեա՛, ընչի՞ պէտք է օտար աղքատ երեխէն տուն դայ քեզ մօտ, նա քո ի՞նչ ընկերն է, յանդիմանեց դաստիարակչուհին և խոժոռ դէմքով հրամացեց Արտեմին հեռանալ:

—Ի՞նչպէս, ես կանչեմ, դու արգելե՞ս, ճչաց դաստիարակչուհու վերայ՝ եսասիրութիւնը վիրաւորւած Վասիլլը, ես կամենում եմ, որ Արտեմը ներս գայ, այն էլ դու ինքդ դուրս գնաս, նորա ձեռքից բռնած՝ ներս բերես. ես կամենում եմ, կրկնեց, նա, ապա թէ ոչ՝ կը գլորեւմ գետին և ոտքերս քարէքար կը տամ: Այս ասելով՝ նա իւր գլուխը խիեց ծառերին և քարշեց պատառեց դաստիարակչուհու շըջազգեստը:

—Աիս, չարութիւն ես անում, Վասե՛ա, տրանջաց քնքոյշ օրիորդը, ես ի՞նչպէս մաքուր ձեռքերով մօտենամ աղքատ երեխային:

—Ո՛չ, ոչ և ոչ, այնդեց Վասիլլը և այնպէս բարձր ծղրտաց, որ աղջիկն ստիպւեցաւ իւր սանի քմահամ պահանջը լցնել. զզւանքով, կնճռոս երեսով դուրս գնաց նա պարտիզից, բռնեց Արտեմի ձեռքը և ներս բերեց:

—Դիցուք, ես քո կամքդ կատարեցի, բայց ի՞նչ կ'ասեն քո ծնողը, երբ իմանան, թէ դու հայերէն ես խօսում սորա հետ, յանդիմանեց դաստիարակչուհին, դու չը գիտե՞ս, որ նրանք ամենայն զօրութեամբ աշխատում են մոռացնել տալ քեզ հօրդ հանդուցեալ մօր փափագով սովորցրած մի քանի հայերէն խօսքերը:

—Ես Արտեմին կը սովորցնեմ Փրանսերէն, ես տրանից այսուհետեւ բաժանաւողը չեմ, անդեց Վասիլլը և պահանջեց բիձայ Սարգսի որդու լնկերութիւնը:

—Այնու ամենայնիւ ես պարտք եմ համարում իսկոյն մօրդ հա-

զորդել այս դէպքը, ասաց և մանուկներին միասին պարտիզում թռղաձ՝ օրիորդն շոտագեց տիկնոջը լուր տալու:

— Դո՛ւրս, դո՛ւրս, անպիտան լակո՛տ, կանացի սեռին անվայել կատաղութեամբ յարձակում դործեց անմեղ մանկան վերայ տիկին Մարիամը, կամ՝ իւր սովորական կոչումով այսուհետև մեծարենք՝ Մարիա Մինասեմսան:

(Փակագծում ասած՝ տիկինը դալալ ծականի աղջիկըն էր: Նորա հայրը, յախնի չէ, Սալմասոփից, թէ Օսմանցուի աշխարհքիցն էր եկել, մի քանի ժամանակ դռնէ դուռը մանգալով հին շորեր ու կօշիկներ էր առել, ծախել, վերջը հիւանդանոցներից մէկի հին փոխնորդները էժան գնելով՝ մի փոքրիկ դրամագլուխ էր կազմել իւր համար: Բաղդը նորան ժպտացել է, կապալներում մեծ գումարներ է ձեռք բերել, անուն է հանել, պալատների տէր է դառել և իւր Մաշօյին քաղաքի հին ազնւական՝ քանդւելու ճանապարհի վերաց կանգնած տների զաւակներից մէկի կինը շնել: Ահա այդ բաղաւաւոր ամուսնութեան քսան տարիների մի հատիկ պտուղն էր մեր Վասեօկը: Մարիա Մինասեմսան տաներեք տարի պտղում չէր. փորձառու բժիշկները հօր պատանեկութեան հասակի մէջ ստացած հիւանդութեան հետևանքն էին համարում):

— Դուրս կորի՛ դու էլ, քո անպիտան ծեր հայրն էլ, խրոխտալով ներս մտաւ տիկինը պարտէզ, հետն էլ ճշաց. — Կիրի՛լ, Կիրի՛լ, դու Կիրի՛լ, ո՞րտեղ ես, շաապի՛ր այս ըոպէիս դուրս վռնդել չափը կորցրած դունասլանին:

Կիրիլը Դաւիթ աղացի տան ընդհանուր կառավարին էր. Նորա ձեռքին էր Դաւիթ աղացի բոլոր կարողութիւնը. նա էր անշարժ կալածքի եկամուտները ժողովում, տան տնտեսութիւնը հոգում, ծառաներ վարձում և արձակում, առնում, տալիս, բերում, տանում. մի խօսքով՝ սոսկ Կիրիլը տիկնոջ և աղացի համար, իսկ Կիրիլ Տրիֆիմիչը աղացի տան հետ յարաբերութիւն ունեցողների համար էր Դաւիթ աղացի տան լիակատար տէրը:

Դաւիթ աղան, կամ նոր կոչումով Դաւիթ Ֆէօլօրիչը, բոլորովին հաւասում էր Կիրիլին, իսկ Մարիա Մինասեմսացի մօտ, նա իրաւունք ունէր առանց թոլլտութիւն խնդրելու ներս մոնել՝ երբ իւր, կամ տիկնոջ կամքը տալիս էր:

— Ե՞ս, Կիրիլ', ի՞նչ ես ուշանում, երկրորդ անգամ ձայն տւեց տիկինը և ձեռքը բարձրացրած՝ կամենում էր խփել խեղճ Արտեմի գլխին:

— Խսկոյն, խսկոյն գալիս եմ, հազիւ լսւեցաւ Կիրիլի ձայնը. բայց թէ Կիրիլի գալն ի զուր անցաւ և թէ Մարիա Մինաեղնայի սպառնալիքը:

— Ինչ կ'անե՞ս, ո՞նց թէ դրուս կը ձգես, վրայ պրծաւ Վասեօկը և կծեց մօր այտի ծայրը: Նորա ատամները թաղւեցին փափուկ այտի մէջ և կապուտ սպիք թողին:

— Այս, ա՛յ, ա՛յ անտանելի մանուկ, վշտացաւ մայրը և շուպեց նուրբ հոտաւէտ թաշկինակով կապել խոյը. մի ամբողջ շաբաթ աիկոնջ երեսը կապւած էր՝ անտեղի կասկածանքներից ազատ լինելու համար:

— Հեռո՛ւ, Կիրիլ Տրիֆիլի՛չ, մօրը թողած՝ դէպի կառավարիչը վազեց Վասիլը, թէ չէ քարով դուխող կը ճղեմ:

## Պ.

— Այս ի՞նչ կը նշանակի, գոշեց Դաւիթ Ֆէօդորիչը, երբ ներսմտաւ իւր առանձնասենեակը և տեսաւ պատառուսուն ցնցոտիներով մանուկին իւր սիրատուն զաւակի հետ՝ իւր սեղանի զարդերը քրքրելիս.— Ե՞ս, ո՞վ կայ այդտեղ, ձայն տւեց նա ծառաներին, դրուս ձգեցէք էս թափառաշրջիկին:

— Ո՞ւմ ընկերին ես դուրս ձգում, իւր հերոսութիւնը գործ դրեց Վասիլը և հօր սեղանի թանկագին իրելէններից մի քանիսը յատակի վերայ փշտեց: Լաւ էր, որ Դաւիթ աղան երեսը թեքեց, ապա թէ ոչ, թանաքամանի կտորտանքն աչքն էին ցցւում:

Դաւիթ Ֆէօդորիչի զարմացական բացականչութիւններին պատասխան եղաւ միւս սենեկից տանտիկնոջ ուրախ քրքչոցով ներկայութիւնը:

Միաբանական ընտանեկան խորհուրդը վճռեց՝ մի քանի օր թոյլ տալ Արտեմին խաղընկեր լինելու Վասեօկին, մինչեւ ապագան անելիքը ցոյց կը տայ, սակայն ոչ այլապէս, եթէ ոչ Վասեօկի աւելորդ հագուստներով երեխային կերպարանափոխած:

**Դ.**

Սովորական դարձաւ այնուհետև բիծայ Սարգսին առաւօտը իւր հետ Արտեմին Դաւիթ աղայենց տուն բերելլ և գիշերը, Վասեօիի քնելուց յետոյ, իրանց տուն տանելլ:

Փոքրիկ մանկան համեստ և քաղցր բնաւորութիւնը օր ըստ օրէ քաղցրացրեց իւր վերայ տանտիրուհուն: Դաւիթ աղայի ասողը նոյնպէս բռնեց Արտեմի հետ. ամենքը սիրեցին նորան և սկսեցին ռուսերէն թոթովել հետը. օրիորդ դաստիարակչուհին այլ ևս չէր զգւում կոկիկ և մաքուր հագնաւծ ւարջուկինս քաղաքակրթելու և ծաղկանոցումը հետը սկսուեցնելու. օրիորդը, ի սէր որդու, սկսեց մինչև անգամ բիծայ Սարգսին մարդատեղ դնել և նորա երեսին ժաղուալով որդու մասին գովասանքներ խօսել:

Միակ դժւարութիւնը և ընտանիքի հոգածութեան առարկան Արտեմի սկզբնական վարժութիւնն էր և լեզուն կոտրելլ: Արտեմի ասիական կոշտ հնչիւններն առաջին անգամը շատ էին աղճատում և ծոռմատում ֆրանսիական փափուկ սալօնական խօսքերը, բայց վեաս չ'ունէր, երեխայի ընդունակութիւնը ամեն բան հարթում էր:

Նատ չ'անցաւ, Արտեմը կամ մոռացաւ, կամ հօր խրատովը մոռանալ ձեւացրեց մայրենի լեզուն. կարճ միջոցում դռնապանի տղան Վասեօկից աւելի յառաջաղիմութիւն ցոյց տւեց և այդ մեծ ցաւ պատճառեց թէ օրիորդ դաստիարակչուհուն և թէ շքեղ ապարանքի գերազնիւ տէրերին:

**Ե.**

Ամեն բան չափ ու սահման ունի. ամեն ինչ սովորական դառնալով կորցնում է իւր նշանակութիւնը, մանաւանդ նորասէր մանուկների համար, եթէ այդ հին սիրելին այսօր նորա եսականութիւնն է գրգռել:

Խորին վիշտ պատճառեց, պէտք է խոստովանենք, Դաւիթ աղային և իւր կոտը, երբ մի օր փոքրիկ Վասեան հօր կապարեայ ձեռնափայտովն այնպէս խփեց իւր խաղընկերին, որ երեխան շնչասպառ

տարածւեց յատակի վերաց: Աւելի դառն հետևանքի կը հասցնէր մանուկ բռնակալը, եթէ մացն ու դաստիարակչուհին չը խէին ձեռքից գաւազանը և չը հրամացէին ծառաներին հեռացնել կիսամեռ Արտեմին:

—Կորցրէ՛ք աչքիցս, գոչեց Վասիլը, էլ չեմ կամենում՝ դորան տեսնել. զա ի՞նչ կը համարձակի ինձանից լաւ ուսանիլ: —Կորցրին, հեռացրին, բայց երկու ժամում հազիւ ուշքի բերին:

Ծերունի բիձայ Սարգիսը՝ եղան նման բառանչելով գետինը ճանդում էր. նա անիծում էր իւր որդուն աղայի տունը բերելու օրը:

Լաւ էր, որ բժիշկը շուտ վրայ հասաւ, կարելի միջոցները գործ դրեց և երեխային ուշքի բերեց, ապա թէ ոչ իրան Դաւիթ աղային մեծ հոգածութեան պատճառ պիտի դառնար այս արկածքը:

## Զ.

—Բիձայ Սարգիս, կանչեց մի օր Դաւիթ աղան. աիկնողդ և իմ կալքն է, որ քո Արտեմիդ արւի Հայոց Ուսումնարանը և մեծանաց, քահանաց դառնաց, մեր տանու տէրտէրը լինի: Կինս թէպէտև շատ էր պնդում, որ արքունի ուսումնարան տանք, բայց ես նորան համոզեցի, որ աղքատ մարդի զաւակին Հայոց Ուսումնարանի կրթութիւնից աւելին անվայել է, որ դռնապանի որդու ամենայարմար պաշտօնը քահանայութիւնն է. ուրեմն՝ վաղը այս տումսակովը կը դիմես Հայոց Ուսումնարանի տեսչին և քո որդիդ կը մասի աշակերտ:

—Բայց ես անկարող եմ կատարել դպրոցի պահանջները, կմկրմաց բիձայ Սարգիսը:

—Իմ տոմսակս կը պատրաստէ քո որդու համար փափուկ անկողին, մաքուր հագուստ և անուշահամ ուտելիք. մեծ բան չի լինիլ դպրոցական վարչութեան համար ի պատիւ իմ՝ բնիկ քաղաքացուս և աղնւազարմութեանս՝ որ և է եկաւոր զազախեցու կամ շան ճրագի փոխարէն, իմ ծառայի որդուն ընդունել:

—Ասուած կեանք տա՛յ, տէ՛ր իմ, խոնարհ երկրպագութիւն տւեց բիձայ Սարգիսը:

Հետեւեալ օրը դպրոցական վարչութիւնը երեք չորս խնդրագրի

վերայ մակադրեց. «Թողուլ առանց հետևանաց, իսկ Արտեմ Սարգս-  
սեանին, ի յարգանս ազնւատոհմ Ա...եանցի, գրել ի շարս ձրիավարժ  
որդեգրաց՝ կոչելով նորան Յարութիւն Դռնապանեանց»:

### Է.

Վ ասիլ մի' ասիլ, մի կրակ ու պատիժ ասա. ամբողջ տունը  
դեռահաս գաղանի քոթոթի ձեռքին դողում էր. քանի մեծանում  
էր, այնքան դաստիարակչուհիքը յաճախ էին փոփոխում. մէկը գե-  
ղեցիկ էր, միւսի հասակն էր շատ բարձր, երրորդի քիթն էր ծուռը,  
չորրորդը յանդգնեց իրան նկատողութիւն անել և այն և այն.  
ամեն մէկին մի մի պատճառ բերելով ճանապարհ էր դնել  
ապլիս Այն տեղը հասաւ, որ մի անգամ էլ յանդգնեց պա-  
հանջել մօրից՝ հեռանալ իրանց տանից, ինքը, ըստ իւր ասու-  
թեան, խնդրելու է հօրը ուրիշ մայր գտնել իւր համար:

Գուցէ շատ հաճոյ թւեցաւ Դաւիթ աղային որդու առաջար-  
կութիւնը, բաց լսելացի տիկինը կարողացաւ աննշան խաղալիք-  
ներով կաղղացնել իրասածի զաւակի սիրող և գրիախառն համբու-  
րով ամեն բան կարգի դնել:

Այդ դէպքը բազմիցս կրկնում էր սեղանի վերայ Դաւիթ աղա-  
յի կողմից՝ իբրև համեմիչ աղ ախորժակ քաղցրացնելու համար:

### Ը.

Ոչ վարժապետ, ոչ վարժուհի չեն մնում Դաւիթ աղայի տանը.  
ամենաշատը երկու շաբաթ, երեք շաբաթ և ահա կամ իրանք են  
զգւում թողնում, կամ Վասիլին է վիրաւորական խօսքերով ճանա-  
պարհ դնում. մէկի վերայ մինչեւ անգամ շունը գրգռեց: Մնողները  
շատ էլ չէին հոգում, ըստ որում ժամանակ չէին ունենում. աղան՝  
կառքը լծել տւած՝ մինչեւ ժամը երկուսը այցելութիւններով էր պա-  
րապած. այնուհետեւ գնում էր մի ժամադրեալ տեղ ճաշելու, կամ  
իւր որոշեալ օրերի պաշտօնական ճաշերն էր տալիս. գիշերներն էլ  
կլուրներում կամ թատրոնական գեղազէշ, շիկահեր, խարտեաշ, քաղց-  
րաձայն երգուհիների շրջաններում էր զւարձանում, նրանց համար  
թանկագին պսակներ էր հիւսում. իսկ տիկինը նոյնպէս ցորեկները

փոխադարձ ացելութիւնների և նորաձեւական եւրոպացուհիների ընդունելութիւնների մէջ էր խառնւած, իսկ գիշերները, Վասիլին քնացնելուց յետոյ, մի ժամանակ Կիրիլ Տրիֆիմիչի հետ փակւած՝ որպէս թէ միւս օրւան տնտեսական հոգսերն էր մտածում, կարգադրում և ապա աղախնի ձեռքով իւր զգգուած մազերը կարգի բերում, հագնելում, զուգըլում, կառոք էր նստում և գնում լոտոների գլխին բազմում մինչև խորին մէջգիշեր:

Այսպէս թէ այնպէս, հարկաւոր էր Վասիլի համար լրջօրէն խորհել, մանաւանդ որ ացելուների քաղաքավարական հարցերից մինն էլ միշտ Վասիլի առողջութիւնից և ուսանելուց տեղեկանալն էր լիլում: Առաջին հարցին հետևում էր. — փառք Աստուծոյ, իսկ երկրորդին՝ խօսքը բերաններում խեղդում էր. Խարել չէր լինիլ, բոլորեքեան գիտէին, որ հոգատար ծնողաց սիրելի զաւակը ոչ ուսուցիչ ունի և ոչ որ և է տեղ ուսանում է:

Հարկադրեցաւ Դաւիթ աղան Կիրիլի ձեռքով քաղաքական դպրոց ուղարկել Վասիլին, բայց այնտեղից մերժում ստացաւ. — գիտութիւնը և տարիները չեն ներում հասակին համապատասխան դասատուն մտնել:

— Ե՛հ, թո՛ղ պատրաստի, յետոյ մտնի, փողի բան չի՞, վճռեց Դաւիթ աղան և հէնց նոյն օրը մի մասնաւոր պանսիօն ուեց, կրկնապատիկը վճարելով և տարեկանը սկզբից տալով:

— Դուք փողի մասին մի՛ հոգաք, պատուիրեց նա պանսիօնի տիրոջը, եթէ նկատէք որդուս թուլութիւնը, կամ ծուլութիւնը, թանկագին ուսուցիներ վարձեցէք, կարևոր ծախսերն արէք, միայն Վասիլիս ուսում տէք:

Դպրոցի տէրը հէնց առաջին շարաթումը հաւաստի եղաւ, որ Վասիլից ոչինչ չէ դուրս գալու, բայց և այնպէս՝ շահաւէտ էր շոյելով, հաճոյախօսութիւններով, դիւրագին սպարգելներով որսը ձեռքից չը փախցնել. դար դպրոց, չը դար, ուսանէր, կամ ոչ, դաս համար տար, թէ ուղղակի դուրս գնար և բակումը վագէ վազ անէր, ամենքն աշք պէտք է փակէին և իրանց գործը շարունակէին:

Անկարծիք, այսպիսի բարեխիղճ դպրոց համելի եղաւ և իրան արիածան Վասիլին. տանից ձանձրացած ժամանակ՝ իրան համար ամենալաւ խաղալու և զւարճանալու տեղն էր. ի՞նչ վնաս, թէ շատ

անդամ քիթն ու պոռոնդն էր ջարդում մարզարանից վայր ընկնելով, կամ իրանից ուժեղ ընկերակիցների բռունցքներն էր անուշանում:

Կարիք էլ չ'ունէին Դաւիթ աղան կամ կինը տեղեկանալ իրանց խելօք Վասիլի մասին. ամիսը մի անդամ երեխան ինքն ուրախ ուրախ ցոյց էր տալիս հօրն ու մօրը իւր յառաջադիմական թւանշանները, բոլոր առարկաներից հինգ էր, վարքն էլ գերազանց, էլ ընչի՞ պէտք է վշտանացին կիրիլ Տրիֆիմիչի ներկայացրած դպրոցական մեծամեծ ծախքերի համար:

Քանի անդամ կիրիլը յայսնել է իւր զարմանքը դպրոցի տիրոջ խոշոր պահանջների համար, բայց միշտ իրաւունք է սուացել ուրախութեամբ վճարելու:

—Բարեհաճեցէք լսել այս թուղթը, ներս եկաւ մի օր կիրիլը և կարդաց դպրոցատիրոջ հետեւալ հաշիւր.

Աղնառիան Վասիլ Ա...ովի վերաց այս ամսում եղած որպատոյ կարգի ծախտեցը.

Արտաքոյ կարգի ուսուցչաց վարձ . . . . .	175 րուբլի
Նկարչական գործիքներ . . . . .	25 ,
Դասարանական պիտոյքներ . . . . .	15
Դասական տետրակներ . . . . .	10
Մարմնամարզական կարևոր իրեր . . . . .	30
Իւր ծեծած ընկերին բաւականութիւն տալու	
համար ընծայք . . . . .	15
Նախաճաշիկի համար քաղցրեկէններ . . . .	7
Իւր կոտրտած անօթների վճարք . . . . .	30

Ընդ ամենը. . . . . 307 րուբլի:

—Հա՛, հա՛, հա՛, միաժամանակ կշէշացին որդեսէր ծնողները, աեսնում ես մեր Վասեօկն ի՞նչ քաջ է եղել, որ ընկերի էլ ծեծել է:

Մայրը գրկեց իսկոյն և համբոյքներ շռայլեց, իրբւ խրախուսանք, իւր «փոքրիկ չարին» (այսպէս էր կոչում նա որդուն փաղաքշական լեզուով), իսկ հայրը հրամացեց փոխանակ 307 մանէթի, 500 կամ կրկնապատիկը վճարել հանդերձ շնորհակալութեամբ, իւր կողմից

ևս պատւիրեց անձամբ տանել խելօք Վասիլին Գրանսիացու մազազինը և աշքի հաւանած խաղալիքները գնել:

—Մի՞թէ մենք տարեկան մի որոշեալ մեծ գումար չենք վճարում ուսման վարձ, կամ վերև նշանակւած պիտոքները չենք գնում, այս կրկնակի վճարքն ի՞նչ կը նշանակէ, իւր կողմից փաստաբանեց Կիրիլ Տրիֆիմիչը յօդուու տիրոջ քսակի:

—Մեր որդին ուրիշ հասարակ քաղաքացիներից այլ ևս լնչո՞վ պէտք է զանազանւի, պարծանոք կշտամբեցին կառավարչի անդիտութիւնը միաժամանակ հայրն ու մայրը:

Կիրիլի պատասխանը մի բազմանշան լուռ ժպիտ եղաւ. նա մուածեց խսկոյն իւր հաշւէմատեանում գրելիք թւերի քանակութիւնը:

Նորա տօմարում գրւեցաւ նոյն թւով՝

—Վասեօվի ուսուցչին արտաքոյ կարգի ծախք՝ 997 մանէթ:

### ԹՇ.

Այլ ևս անհնար էր Վասիլին պանսիօնում պահել. դպրոցը տարրական էր, իսկ Վասիլի տարիները 18-ից անց է: Խելացի դպրոցատէրը բարոք դատեց ուրախ ուրախ Դաւիթ Ֆէոդորիչին ացցելել նորա ուսումնաւարտ որդու հետ. նա շնորհաւորեց ազնւազարմ պարոնին զաւակի յառաջադէմ և յաջող դասաւարտութիւնը՝ պարզելով հօր սեղանի վերայ մի սկիտառ վկայական գերազանց թւանշաններով:

—Զեր որդին իրաւունք ունի վաղւանից գիմնազիայի բարձր դասարաններում շարունակել, պարծանոք շեշտեց զպրոցատէրը, բայց իմ սրտալիր խորհուրդս է՝ ափսոսալ ձեր աշխատանքը և որդուդ միանգամայն ազատել այս տգէտ քաղաքի անկիրթ երեխաների ընկերակցութիւնից և հասարակական ուսումնարաններից. ձեր ազնըւութեան պատւոյն վայել է՝ միակ զաւակիդ մեծ քաղաքի մասնաւոր բարձր դասընթացով պանսիօններից մէկում տեղաւորել, կամ քաղաքակիրթ աշխարհի գիմնազիոնները տալ, որով մի քանի տարւայ ձեր և իմ աշխատանքը լիովին կը սկսակւի:

Դպրոցատէրն իւր անկեղծ խորհրդի համար մի ծալք թղթադրամ պարզե ստացաւ. Դաւիթ Ֆէոդորիչից:

**Ժ.**

Ոչինչ բանով այն տարին Վասիլը չը համաձայնեց ոտքը քաղաքից դուրս դնել կամ ուսանել:

—Հոգիս դուրս եկաւ աշխատելով, իրաւացի նկատեց Վասիլը, մի տարի գոնէ հանգստանամ:

—Գնա՛, եթէ կամենաս, ուրիշ քաղաքում հանգստացիր, խընդրեցին, աղաջեցին ծնողքը կարճ միջոցից յետոյ, այլ ևս չը կարողանալով տանել որդու ապիրատութիւնը և զեղլս կեանքը:

Կարելի է արհամարհէր Վասիլը ծնողաց ցանկութիւնը, եթէ աշխարհատեսութեան և մեծամեծ քաղաքների գրաւիչ փափկութիւնը չը դրդէին նորան:

Այդ պատճառով մի օր ճեպակառքը Կիրիլ Տրիֆիմիչի ուղեկցութեամբ թռցրեց նորան դէպի առաւել նշանաւոր մեծ քաղաք:

Անտարակոցս, ոչ մի կանոնաւոր դպրոց իւր պատերից ներս չէր կարող ընդունել Վասիլի նման անընդունակ և մոլի պատանւոյն. մի շաբաթւայ մէջ երեք տեղից արձակւեցաւ:

Ստիպւեց Կիրիլը մեծ վարձատրութեամբ մի մասնաւոր դպրոց տալ Վասիլին և քսակը փողով լցրած՝ վերադառնալ:

—Ինձ նայի՛ր, հրամայողաբար մատը շարժեց Կիրիլի վերայ Վասիլը վերջին հրաժարական բովէին. վա՛յ քեզ, եթէ մի օր իմ փողը պակասել է. կայծակի արագութեամբ կը սլանամ մեր քաղաքը և կռնիցդ թւնած՝ դուրս կը շպրտեմ:

—Մախաի՛ր, որքան կամքդ կը բարեհաճի, ասաց Կիրիլն և ճանապարհ ընկաւ. այդ խօսքերով, ժպտաց նա իւր միջումը. դու իմ ճրագը վառում ես, ձերը հանդցնում:

**ԺԱ.**

Որչափես մեծէր պանսիօնատիրոջ ստացած վարձատրութիւնը, բայց անկարող եղաւ մի տարուց առաւել զսպել անկապ աշակերտին. մի օր դրուը բաց արեց և պարզ ի պարզոց կօշիկներն առաջը դրեց:

Բացւեցաւ այնուհետև մեր նորահաս երիտասարդի համար աղատ ասպարէզ:

Անպիտան ընկերները շրջապատեցին Վասիլին. Հիւրանոցներն իրանց անմիջական հիւրն էին տեսնում, պարուհիներն ու երկրորդական դերասանուհիները միմեանց դէմ ինտրիգներ էին լարում. իսկ փողը ջրի պէս առու էր եղել գնում քսակից:

Այդ քաղաքում Վասիլը փող ստանում էր մի վաճառականից Կիրիլ Տրիֆիմիչի յանձնարարութեամբ: Կիրիլը բարեխիղճ պարոնի հետ ծածուկ շինւել էր, երկուստեք պայմանը ձեռնոտու էր. որոշած էր՝ այլապէս փող դուրս չը թողնել, մինչև կրկնապատիկ ստորագրութիւն չ'առնի:

Վաճառականի գործ դրած հնարքն առաւել՝ գործնական էր: Ակզբներումն անխնայ և անհաշիւ շուալլում էր, տալիս էր առանց ինչ ստորագրութեան. փոքր առ փոքր սկսեց մասնաւոր նկատողութիւններ անել, հետզհետէ դժկամակութիւն և տրտունջ յայտնեց. մի օր էլ կտրականապէս մերժեց՝ պատճառելով, որ նա իւր դրամարկղի փողերը կտրեց:

Նատ աղաչեց, թախանձագին պաղատեց Վասիլը, բայց մինչեւ եռապատիկ ստորագրութիւն չը տւեց բոլոր վերցրածի համար, սուկոսն էլ վերան բարդելով, ոչինչ չը դուրս տարաւ:

Մի տարւայ մէջ այդպիտով մի սարսափելի գումարի ստորագրութիւն տւեց:

Փորձառու վաճառականը յարմար դատեց պարտքի ցուցակն ուղարկել Կիրիլ Տրիֆիմիչին և փողերը պահանջել:

Վերջինս իւր դիմի մագերը քաղեց. պարտքի գումարը տիրոջ եկամտից շատ աւելի էր. տէրը շատ էլ համաձայնէր վճարելու, հնար չ'ունէր, այս դէպքը կարող էր, գուցէ, իւր դրութիւնն էլ խախտելու, իսկ այդ իւր համար վաղահաս էր. դեռ բաւականին անշարժ կալւածներ կային, որոնք Կիրիլի հաշւով իրան էին մնալու, սակայն դեռ շուտ էր:

Կիրիլը լաւ համարեց գրել վաճառականին՝ Վասիլի պարտքը կիսով չափ պակաս ցոյց տալու:

Քարն ապառաժին էր հանդիպել. խորագէտ վաճառականը մի նամակով վճռաբար յայտնեց Կիրիլին, որ եթէ իւր պահանջը լրիւշի բաւականացնիլ, ինքն ուղղակի կը ներկայացնի Դաւիթ Ֆէօդորիչին՝ նորա յանձնարարական դրի հետ միասին:

**ԺԵՐ.**

Թող վոխադարձ բանակցութիւնները շարունակւին Կիրիլ Տրիֆիմիչի և իւր հաւատարմատարի մէջ, իսկ մենք հետևենք Վասիլ Դաւիթիչի նիստ ու կացին՝ մի երկու պատկեր իրրեւ նմուշ յառաջ բերելով:

—Այսօր ճաշին ո՞ր տեղ ենք, նշանացի էին անում մեր Վասիլի մշտական ընկերները:

—Խնձ մօտ, պատասխանում էր մէկը:

—Է՛՛՛, դու քաղցած ճաշին ես քնում, գնա՞նք ինձ մօտ:

—Դու էլ մի հիւրանոցում երկու բաժին կերակուր մի շիշ գինով փորներս պէտք է ածես ու ճանապարհ դնես:

—Ե՞նչ էք խաղերով հասկացնում, ես արդէն մեր չորս պարուհիներին ժամ եմ որոշել մեր սիրած հիւրանոցումը, Վալորեան նոյնպէս դալու է, ահա և եղանք չորս:

Տղացը վաղուց է սպասում են. ժամը շատունց լրացել է, քանի մի գինու շիշեր յատակին դատարկ զլորւած են, տրամադրութիւնը զագաթնակէտին է հասել, բայց պարուհիները չը կան:

—Այս ի՞նչ է նշանակում, Վասիլ, յանդիմանում են ընկերները, վիրաւորել հօ չե՞ս:

—Ոչի՞նչ բանով:

—Կառքի փող չե՞ս վճարել:

—Մի քսան և հինգանոց:

—Ուրեմն:

—Ուրեմն...ը'...ը'... Վասիլը մատը կծեց... հասկացայ, անպատճառ Սօնեան ինձանից վշտացած է, միւսներին էլ նա է արգելք եղել: Երեկ երեկոյ նորա համար ուղարկած փունջս Սաշայի փնջից փոքր էր. ես դիտմամբ այնպէս էի պատվիրել, և շատ իրաւացի՛. նա ընչի՞ պէտք է իմ Սաշայի հետ ուզ ձգի:

—Օ'...օ'...օ'..., անպիտա՞ն, դու իմ Սօնեայի սիրու կոտրել ես, մեղաւո՞ր ես, մեղաւո՞ր, գոչումեն միւս ընկերները իրար ակնարկելով. գնա՞նք, գնա՞նք, Սօնեայի ձեռքը համբուրի՛ր, ներողութիւն ինդրի՛ր. բայց առաջ մտնենք քաղցրավաճառի մօտ, անուշեղէնով բերանը քաղցրացրո՛ւ:

—Անուշեղէն և ոսկեղէն, վրայ է բերում մէկը:

—Այո՛, և աղամանդեաց քորոց:

—Եւ աղամանդեաց քորոց, անգիտակցաբար կրկնում է Վա-

**միլլ:**

—Կեցցէ՛, ուրեմն, Սօնեան, բաժակը բարձրացրեց մինը:

—Ոչ միայն Սօնեան, այլ և՛ Սաշան և՛ Տանեան և՛ Վարեան:

—Չո՛րսն էլ, չո՛րսն էլ, չո՛րսն էլ:

—Չո՛րսն էլ, ապուշի պէս կրկնում է Վասիլը:

—Չորսին էլ պարզե՛, չորսին է՛լ, թո՛ղ ոչ մէկի սիրտը չը մնայ:

—Ես իմ Տանեացի համար կ'առնեմ, ասում է մէկը:

—Ես իմ Վարեալի համար:

—Ես կ'առնեմ քո Սաշացի համար, Վասիլ:

—Իսկ ես՝ քո Սօնեացի համար:

—Շա՛տ լաւ, շատ գեղեցիկ, ուրեմն գնանք:

Սեղանը դրած մնաց. Վասիլը մի 25-ոց ճգեց հիւրանոցի ծառացի առաջ, հրամացեց սեղանը փուած թողնել մինչեւ իրանց վերադարձը:

Չորս թանկապին գոհարեղէն գնահատուեցին:

Ընկերներից մէկը ձեռքը գրպանը տարաւ:

—Ա'խ... անբաղբոթի՛ւն... քսակս տանն եմ մոռացել:

—Իսկ ես բոլորվին կորցրել եմ:

—Այս րոպէիս կամենում էի ձեզանից մէկից պարտ խնդրել, մօտս փող չ'ունիմ, հաւատացնել է կամենում երրորդը:

—Գնացէ՛ք, կորէ՛ք, պարծենկոտնե՛ր, ձեզանից ճրագ չի կըպ-չիլ, յանդիմանելով քսակը հանեց մեր Վասիլը և սակարկած բոլոր գոհարների վճարքը տւեց:

Մի և նոյն գործողութիւնը կատարեց քաղցրավաճառի խանութում:

Կառքերը կանգ առան պարուհիների դրանը, մեր հերոսները վեր բարձրացան:

—Օրիորդներն այսօր փոքր ինչ տկար են, հարբուխ ունին, ընդունել չեն կարող, յայտնեց ծառան:

—Ի՞նչ ես փչում, անպիտա՞ն, գոչեց Վասիլը, հապա ո՞ւմ տանենք այս գոհարներն ու անուշները:

Ծառայի աչքերը շւեցին գրպաններից հանած աղամանդների փայլերից:

— Ենորհ բերէք — բառի հետ պարզները սուն ընկան: Երկար չեմ ու չումից յետոյ՝ վերջապէս Սօնեայի սիրտը տեղն ընկաւ, ժպտաց Վասիլի երեսին, ընդունեց նորա պարգևը, թոյլ տւեց նորան իւր ձեռքով հանել կրծքից հին քորոցը և տեղը ցցել այս նոր բերածը ու փոխարէնը մօտեցրեց իւր երկու մատը նորա շրթունքին:

Վասիլն ինքն իրան երջանկութեան եօթներորդ երկնքումն էր համարում:

— Ուրեմն քո ձեռքով մի ծխախոտ ոլորի՛ ինձ համար և բերանս դի՛ր, շնորհ արեց զթասիրա Սօնեան:

Տասը մանէթանոց թղթադրամը մօտեցրեց Վասիլը լուցկիքին, որ նորա ծիրանի բոցով վառէ դիցուհին իւր ծխախոտը:

— Այս մի ուրիշ տեղ պէտք կ'ածենք, խեց քնքշութեամբ նազիկ օրիորդը թղթադրամը Վասիլի ձեռքից և արհամարհանօք շպրտեց գէալի ընկերուհին, այժմ լուցկին աւելի լաւ կը ծառացի:

Ի նշան սրտալիր գոհունակութեան՝ Սօնեան ցուցամատով Վասիլի քթին երեք անգամ խփեց ու ծխի քուլաները երեսին փշեց:

— Կեցցէ՛, կեցցէ՛ հաշտութիւնը, աղաղակեցին տղայքը և ամեն մէկը մի օրիորդի թեւանցուկ կառքի մէջ նստեցրին ու վերադան հիւրանոց:

## Ժ.Պ.

— Հը՛, բարե՛, ի՞նչ կայ:

— Գնանք:

— Ո՞ւր:

— Զը գիտե՞ս, փող է պէտք:

— Ուրեմն ստացե՞լ է:

— Երեկ երեկոյ քսակումը մի քանի հատ հարիւրանոցներ տեսայ:

— Զե՞նք ուշացել:

— Ո՞չ, Վալօդեան սորանից մի ժամ յառաջ քսակը լիքն է տեսել:

— Մօռդ փող ունի՞ս:

—Տասը մանէթի չափի:

—Բաւական է, երբ կը մտնենք հիւրանոց, դու իսկոյն խմի; քների շիշերը դարսել տո՞ւր և յետոյ թղթի սեղանը բաց արա' :

—Իսկ դու մի՛ մոռանալ նշանացի հասկացնել ինձ նորա թղթերը:

—Գիտես էլի՛, թէ աջ ականջս քորելն ի՞նչ նշան է, ձակն ի՞նչ, քիթս ո՞ր թուղթն է, յօնքս ո՞րը:

—Ների՛ք է, հերիք, դասերս հաստատ ենք սերտել, սատանան կը մոռացնի, մեր գրպանի թշնամին հօ չե՞նք:

—Դու ինձ ասա', լաւ չէ՞ր լինիլ, եթէ մեզանից մէկն այսօր նորան տարւէր:

—Գժւե՞լ ես, այսօր ի՞նչ ժամանակն է, այդ կ'անենք մի ուրիշ օր՝ նորա քաղցած միջոցը. դու չը գիտե՞ս, որ միայն մենք չենք. թիֆլիզեցի Միլսակին մոռացել ե՞ս, փողի հոտն առաւ թէ չէ, ձեռաց քարշ կը տայ իրանց տուկու խորովածն ուտեցնելու, երկուան էլ հայ են, մի հող ու ջրի մարդ են, նրանց համար մի կտոր խանձւած, մոլորի մէջ շաղախւած միսը մեր բի տկին երից ու կօտլետներից գերազանց է:

—Որպէս թէ Միլսակի մեծ հոգսն էր, թէ նա խորոված չի ուտիլ:

—Դէ՛, ի հարկէ՛, միտքը դրպանը դաստարկելն է:

—Նապա նաղինկանե՞րը, Կառեանե՞րը եթէ իմանան, կը դրզդրգեն և կը պլոկեն:

—Կառապան Խվանը հօ՛, երբ իմանայ, երկու հատ 100-նոց դուրս կը խլի, նա ամեն օր տրտնջում է, որ Վասիլն իրան փող չի տալիս:

—Մի խօսքով, ամեն կողմից քաղցած դայլերի նման կը ժողովւին ու ով չուստ, նա կուշտ:

—Եթէ այդպէ՞ս է:

—Եթէ այդպէս է՝ շտապե՞նք:

Կարծեմ անհասկանալի չը մնաց, որ այս խօսակցութիւնը լինում էր մեր Վասիլի հաշւին. խօսակիցները նորա երկու ամենօրեայ լնկերներիցն էին, որոնք անքուն պահապանի նման հսկողութիւն էին անում հերթով, թէ ե՞րբ պէտք է Վասիլը վաճառականից փող ստանար, որ դուրս ծծէին:

— Բայց, բարեկամ, կասկած յայտնեց ճանապարհին ընկերներից մէկը, մենք անխոհեմութիւն ենք անում այդպէս անխղճաբար կողոպտելով Վասիլին, մի օր էլ կարող ենք զրկել մեր հաստատուն եկամտից. անցեալ օրը Վալօդեալին շատ հասկացրի նշանացի, որ մի քանի մանեթ յետ տարւի Վասիլին, նա ուշադրութիւն անգամ դարձնել չուզեց:

— Եւ ի՞նչ մնաս:

— Նա կարող է քաղցած մնալ, յուսահատվի, մեզանից զզւել. չէ՞ք յիշում, մի քանի անգամ նորան փող տւող վաճառականը մերժել էր: — Նը, մի՞թէ պատճառը չիմացար. վաճառականը այդպիսով կրինապատիկ ստորագրութիւն է առել, Վասիլին ինձ պատմեց. և երանի թէ յաճախ կրինէր իւր արարքը:

— Մեզ ի՞նչ օգուտ:

— Եա՛տ օգուտ. այն ժամանակը մենք Վասիլին մի քանի կոպէկներ կը տայինք, ճաշի կը հրաւիրէինք, թղթախաղում մէկս կը տանէինք, միւսս, որպէս թէ կարեկցարար, պարտք կը տայինք և այդպիսով մեր որսն ուրիշի ճանգը չէինք ձգիլ:

## ԺԴ.

— Պատրաստւի՛ր այսօր իսկ գնալ մեր փուչ կենդանու ետևից, ապա թէ ոչ, մի օր մեր պոչը սառցի կը կապի, մուայլոս դէմքով հրամացեց Դաւիթ աղան Կիրիլ Տրիֆիմիչին:

Վերջինս լուռ էր:

— Քեզ եմ ասում, չե՞ս հասկանում, ինչպէս տարել ես, գնա՛, յետ քարշ տո՛ւր, եթէ չես հաւատում, առ կարդա՛: Երկու նամակ սեղանի վերաց ընկած էին, Դաւիթ աղան շպրտեց Կիրիլի առաջը:

Մէկի ձեռքը ճանաշեց կառավարին և գունատեց: Իւր համախոչ վաճառականիցն էր:

— Այս է, որ ես կորաց, մոտածեց Կիրիլը, տնաքանդն անպատճառ մեր գաղտնիքը դուրս է տւել:

Բարեբաղդաբար, ոչինչ այդպիսի բան չը կար, լոկ հաշիւների ցուցակն էր կցած հետք:

Երկրորդ նամակը Դաւիթ աղայի ծանօթներից մէկիցն էր. նա ավտոտում էր այդպիսի մեծ և անտառնի տան պատճին, խորհուրդ էր տալիս կորսուեան կէս ճանապարհից յետ խլելու իւր մոլորած որդուն:

— Իրաւունք չունի վաճառականն այսքան մեծ պահանջ անել, արտաքուստ իւր տիրոջ մօտ տհաճութիւն յացնեց Կիրիլը, ես նորան արտօնութիւն չեմ տւել այսչափ մեծ գումար բաց թողնելու Վասիլ Դաւիթիչին, այլ ապրելու չափ միայն. օրէնքը մեզ նպաստաւոր է, թո՛ղ գանգատուի, մեր փաստարանը նորան կը սեացնէ:

— Աւելորդ դասարկաբանութիւններ պէտք չեն, ինձ ամեն բան յացնի է, եղածն եղել, անցածն անցել է, այսօր իսկ գրաւ դի՛ր մի շարք խանութներ, տար մարդի պարտքը վճարի՛ր և փուչ որդուս ա՛ռ արի՛:

— Իսկ եթէ չը դայ Վասիլ Դաւիթիչը՞:

— Այդ գէպքում՝ ահա այս ստորագրութիւնը, ա՛ռ, հրատարակի՛ր քաղաքական իշխանութեան ձեռքով:

Գրութեան բովանդակութիւնն էր. — յայտնում եմ ի լուր ամենքի, որ այսուհետեւ իմ որդի Վասիլ Ա...ովին պարտք տւողը կորցնում է իւր փողը. իմ բոլոր կարողութիւնս գրաւ է դրւած, կարճ միջոցում ի վաճառ կը հանւին և որդուս համար վճարելիք չի մնալ:

— Յետոյ այս ի՞նչպէս հրատարակենք, ասաց կառավարիչը, ձեր անունը, ձեր պատիւը, ձեր վարկը...

— Տա՛ր, դառն ժպիտով արհամարհանք ու զգւանք արտայալտեց Դաւիթ աղան՝ ձեռքը օդում ճօճելով, տա՛ր, եթէ կամենաս, այսօր իսկ հրատարակի՛ր, ես հաշտել եմ իմ յիմար անհեռատեսութեան հետ:

Դաւիթ աղան ծխախոտը բերանին սենեկում սկսեց գլխակորման գալ:

— Գնա՛, կատարի՛ր հրամանս, ասաց նա յանկարծ կանդ առնելով, մի՛ մոռանար նոյնպէս տանը ծախսելու համար փող թողնել:

## ԺԵ.

Մի կողմից Վասիլն է փչացնում, միւս կողմից ինքն՝ անհոգ Դաւիթ աղան ու կինն են շոայլում:

Կլուբներում հայրն է թղթախաղի մէջ հարիւրանոցները ձեռնաթող անում, հիւրանոցներում որդին է զեղսութիւններ անում. իսկ տիկինը նորաձեռութեանց է հետևում և լուսովի վերաց այժմքիթը ցցած՝ երեկոյթներ է սարքում և կարտի սեղաններ է բացանում: Այժմ քաղաքակիրթ ընտանիքների մէջ էլ ո՞վ է լուս խաղում: գլուխը կապաճներն արժան չեն տեսնում լուս խաղալու, Մարիա Մինաելիսա՞ն պէտք է հին մար. նա քանի տարի է, որ եւրոպական գլուխ է պահում, ամենաթանկագին փետրաւոր փեղովներն է ծածկում. նորա գլխի մազը ամիսը մի անգամ, քաղաքի նշանաւոր վարսաւիրի ձեռքովն է խուզուում և օծուում:

—Ելի՞ գուք տարւեցաք, թամնկագի՞ն Մարիա Մինաելիսա՝ մեր սիրելի տանտիրուհի, միշտ պատրաստակամ հետաքրքրութեամբ հարցնում են ընթրիքից յետոյ հիւրերը:

—Այլապէս ամօթ էր ինձ, իմ տանս, իմ պատւելի հիւրերիս կողոպատել, մի կտոր հաց էի ուտեցնում, որ գրպաննե՞րը դատարկեմ:

—Որքա՞ն տարւեցաք այս երեկոյ:

—Յիշելն անգամ չ'արժէ, հազարաւորների չի հասնիլ, տասնաւորներ, հարիւրաւորներ:

—Ոչի՞նչ, շուտով ես եմ մոտագիր մի խնջովք կազմել, յուսադըրում էին այս ու այն ոք, մեր տանը ես կը տարւիմ ձեզ, փոխարէնը դրւու կը դայ:

—Իմ քաղաքավարութեանն ի՞նչ է եկել, որ թոյլ տամ ձեզ նման բազմաթիւ զաւակների տիրո՞ջը ծախքի վերաց ծախք էլ աւելացնել, այն ժամանակն էլ ինքս եմ խոստանում տարւել, ճանապարհ է զնում քաղցր խօսքերով իւր հիւրերին Մարիա Մինաելիսան:

—Նատ էլ կամենաս տանել, շնորհք չ'ունիս, անխելք արարա՛ծ, հեգներով պատասխանում էին ճանապարհին Մարիա Մենաելիսայի հասցէին նորա հիւրերը. լաւ կթի կով ես մեզ համար, բայց ափա՛ս, որ մեր այս եկամտի առատաբուղիս աղբիւրը շուտ չը չօրանայ, հօրդ թողած սարերը ցամաքել են:

### Ժ-Զ.

—Վասիլ Դաւիթիչն երեկ երեկոյ 1500 մանէթ է տարւել,

այժմ պահանջում են, ի՞նչ էք հրամացում, տուն մտաւ կառավարիչ  
Կիրիլը Դաւիթ աղայի մօտ:

—Ինձ ևս նոյնչափ հարկաւոր է այսօր ճաշից յետոց:

—Հինգ կոպէկ չը կայ:

—Պարտք վերցրու:

—Տւող չը կայ:

—Մեծ տոկոս տուր:

—Այլ ևս ոչ ոք չի հաւատում առանց դրաւականի:

—Գրաւ դի՛ր:

—Ի՞նչ բան:

—Մի կալւածք:

—Բոլորը գնացած են երեկւան աճուրդումը:

—Խնչպէս, ո՞ւմ կայքն է աճուրդի դրւում:

—Զեր:

—Ո՞վ համարձակւեց ծախել:

—Ես:

—Առանց իմ գիտութեա՞ն:

—Նախ՝ որ բանկերում զրաւ դրւած և ժամանակին փողը  
տուն չը տարած կալւածքի մասին ոչ ոքի չեն հարցնում աճուրդի  
գնելու համար, և երկրորդ՝ որ մէկը կար, որ ազատ իրաւունք ու-  
նէր, առանց ձեր կամքը հարցնելու, ծախել տալու:

—Եւ այդ մէ՞կը:

—Ես էի, ինչպէս յայտնեցի ձեզ:

—Ո՞ր իրաւունքով ես արել:

—Զեր և Մարիա Մինաեմայի հաւատարմաթուղթն է իւր ա-  
նելիքն արել:

—Լո՛ր, անպիտա՞ն, բարկանալով և ատամները կրճտելով վեր  
թռաւ տեղիցը Դաւիթ Ֆէօդորիչը:

—Ես կը լրեմ, բացց արդէն կայքերիդ նոր և օրինաւոր տէրն  
եկել պահանջում է, որ թողնէք և հեռանաք իւր սեպհականու-  
թիւնից, սառնութեամբ պատասխանեց Կիրիլ Տրիֆիմիչը:

—Ո՞վ է այդ մարդը:

—Ոմն Պետրոս Պօղոսով, որ երեկ աճուրդի մէջ գնեց ձեր բոլոր  
կայքերը:

—Ո՞ւր է նա:

—Եւր գալն աւելորդ համարեց. նա ուղարկել է իւր ընդհանուր կառավարչին:

—Ո՞ւր է այն մարդը:

—Զեր առաջին խոնարհաբար կանգնած:

Եւ Կիրիլ Տրիֆիմիչը ցոյց տւեց մի հաւատարմաթուղթ մի անդայտ Պօղոսովից, որով ինքը լիակատար իրաւունք էր ստանում կառավարելու նորա նոր կալւածքները:

—Ուրեմն խկապէս ինքդ ես տէրը, ինքդ ես ներս տարել անհշան մարդուն, աճուրդում կանգնացրել. քո փողերսն է նա աճուրդ մտել:

—Կարող էք և այդպէս հասկանալ:

—Իրաւունք ունիս, ասաց հառաչելով Դաւիթ աղան, իրաւունք ունիս, իրաւունք ուն...

Վերջին բառը մի սուր ճշիւնով պէտք է դուրս թռչէր Դաւիթ աղայի բերանից, բայց թերի մնաց. նա յանկարծական ցնցումով գետին տապալւեց:

## ԺԷ.

—Այս ի՞նչ ճիչ և դղրդոց էր, շտապաւ դուրս վազեց Մարիա Մինաելիսան կրծքաբաց իւր առանձնասենեակից:

Նա զարդարում էր ինձոյք գնալու:

—Ոչի՞նչ, Դաւիթ Ֆէօդորիչի ուշքը գնաց:

—Զուր, ջուր, աղաղակեց տիկինը:

Զրի կարիք չը մնաց, ինքը Դաւիթ աղան աչքերը բաց արեց և վեր կացաւ:

—Դէ՛հ, ա՛յ կին, հետեւի՛ր ինձ, կարող ես ինձ դտնել տէր Կեռնդի տանը:

## ԺԲ.

Քաղաքի մի հեռաւոր թաղում մի փոքրիկ երկայարկ տնակ արտաքուստ սակաւ է զանազանուում իւր շարքի շինութիւններից,

իսկ ներսը վերնայարկումը երեք պարզ կահաւորւած սենեակներ ախորժելի տպաւորութիւն են թողնում այցելուի վերայ:

Յաւալի է միայն շարունակ տեսնել սենեակներից մէկի մէջ անկողնում պառկած ծերունի հիւանդին:

Հիւանդի մօտ պատու պտոյտ է անում մի չափահաս կին: Տիկինը, ըստ երևութիւն, հիւանդի ամուսինն է. բայց երկու ամոլների մէջ, կարծես, մի տեսակ սառնութիւն է տիրում. մի աղէտ նրանց երկուսի երեսին իւր անդառնալի գծագրութիւնն է թողել:

Կինն անտարբեր է դէպի հիւանդը. նա թէպէտ կոտրւած, ընկճւած է, բայց չի դադարում ողջ օրը պարապել իւր սենեակների մաքրութեամբ և իւր աժանագին պաճուճանքները կարգի դնելով. կարծես րոպէ առ րոպէ սպասում է ժամադրեալ հիւրերի:

—Մի պատանի ծառաց ներս ու դուրս է անում. նա է հիւանդի անհրաժեշտ պահանջները լրացնողը. նա տուն է գալիս մի փոքրիկ պղնձեայ ձեռնազանգի զօղանջիւնով. նա է կերակուր պատրաստողը:

Երկու այցելուներ ժամանակ առ ժամանակ բաց են անում անձանօթ ընտանիքի դուռը: Նոցանից մէկը պատառոսուն ցնցոտիների մէջ կողլւած մի երիտասարդ է, միւսը մի համեստ հագնւած հոգեւորական՝ նոյնպէս միջին հասակում:

Երիտասարդն երբէք լուրջ չի տուն մտնում. նորա փոս ընկած աչքերը շարունակ ուռած են, երեսը փքւած, քթի ծայրը կարմիր և ձայնը խոպոտ:

—Փող չ'ունիմ, մայրի'կ, դիմում է տանտիկնոջը գինետների մշտակաց այցելուն:

—Քա՛րը գլուխդ, թէ չ'ունիս. ես շատ ունի՞մ:

—Զես ուզում, մի՛ տալ, զօր չեմ անում, բայց ահա՛ քումբիկդ (շրջազգեստ), երկու շիշ գինի կը տան մի կտոր սեհացով ու տիսով, ասում է դառնաժպիտ անառակ որդին և վագում մօր սենեակից դերիէն դուրս թրւում:

—Դէս ձգի՛ր մօրդ հագուսոը, ա՛ռ ահա քեզ մի րուբլի, յետ է կանչում հիւանդն արբեցողին և բարձի տակից թղթադրամը շպրտում նորա ոտքերի տակ:

Թափառաշրջիկը նոյն հեգնական ժպիտով վերցնում է փողը և անշալտանում:

—Մեռնի՞ս, փշելի՞ս, Վասի՞լ, գետինը խորտակւի՞ս, որ միւս  
անդամ այս տունը ոտք չը կոխես, մեր արիւնը չը պղտորես, մեր  
ցաւերը չը նորողես, որդու քամակից անէծքներ է ուղարկում Մա-  
րիա Միսաեմնան:

—Ներիք է, ա'յ կին, մեղաւորը մենք ենք, մեր մեղքն է,  
պէտք է կրենք և կրում ենք, գլուխը շարժելով հանդարտութեամբ  
ասում է Դաւիթ Ֆէօդորիչ:

—Քեզ ո՞վ էր ասում մի օտարազգի կառավարչի հաւատ լն-  
ծայէիր, որդուդ անծանօթ աշխարհում անխնամ ձեռնաթող անէիր,  
որ այսօր թէ որդիդ փշանար, թէ հօրս դառը քրտինքը շներոց ու  
դայլերոց լինէր:

—Է՛հ, ա'յ կին, շա'տ ենք ասել, շա'տ ենք լսել, երկուսս էլ  
կախաղանի ենք արժանի. քանի՞ց սրտացաւ ազգակիցների խորհը-  
դով կամեցել եմ ես հալածել այն օտարին մեր դռնից, բայց դու-  
միշա պաշտպան ես դուրս եկել, ասելով, թէ դու կը զգւես տեսնե-  
լով նորա տեղն եկող հոտած հայի ժանդոտ երեսը:

—Սուտ ես ասում, վերջերումը Կիրիլն ինձ ևս ատելի էր դար-  
ձել, յանդգնութեանը սահման չէր մնացել, ես միշա կամենում էի  
դուրս անել, բայց դու արգելք էիր լինում:

—Լա՛ւ, լա՛ւ, դու ուղիղ ես, անցածի վերաց խօսելը ջուր  
ծեծել կը նշանակի, ասում էր Դաւիթ աղան և երեսը դէպի պատը  
շրջում, թողնելով, որ կինը ժամերով իւր կահ կարասիքը կարգի  
բերէ և ժամերով շարունակէ իւր արտոնաշները:

### ԺԹ.

—Բարի ողջոյն, հայրիկ, ներս է գալիս սովորաբար երեկոյեան  
ժանդառքից յետոյ երիտասարդ քահանան:

—Օրհնեա՛, տէ՛ր:

—Ի՞նչպէս է այսօր ձեր առողջութիւնը:

—Շնորհակալ եմ:

Քահանան նստում է հիւանդի բարձի մօտ:

—Եկա՞ր, տէրտէր ջա՞ն, ներս է գալիս հանդարտ քայլածքով  
տիկին Մարիամը:

Տէրտէրը տեղից վեր կենալով.

— Ողջո՞յն ձեզ, մայրի՛կ:  
 Քահանան հանում է վերարկուի տակից թաշկինակում կապած մի թղթեայ պարկ:

— Ահա՛, մայրի՛կ, ձեզ համար մրգեղին եմ բերել:  
 — Մի՛ անիլ, տէրտէ՛ր, խնդրեմ, այդ բանը:  
 — Այս վերցրէ՛ք, միւս անդամ չեմ անիլ:  
 — Ամեն օր ասում ես, ամեն օր էլ անում ես:  
 — Վնաս չունի:

— Ի՞նչպէս վեաս չունի, աշխատանքիդ կէսը մեր վերայ ես ծախսում, հացիդ կէսը մեզ ես ուտացնում:

— Իմ հացը չէ՝ ձերն է, մայրի՛կ, այս հացը դուք էք ինձ աւել:  
 — Մի՛ մոռանալ, որ դու ընտանիքի տէր ես, նրանց ես պարտական պահելու, մենք էլ քո վզին մի աւելրոդ ծանրութիւն ենք:  
 — Աղաջում եմ, մայրի՛կ, դրանով ինձ վիրաւորում էք. որդին իւր ծնողացը պարտական է, դուք իմ հոգևոր ծնողքն էք:  
 — Բայց դու մեծ եկամուռներ չ'ունիս:

— Աստուած ժողովուրդը հաստատ պահի, իւր քահանավին քաղցած չի թողնիլ. չէ՞ք լսել առածը. — տէրտէր արա՛, զիւզը ձգի՛ր, եթէ չ'ապրի, գեալը ձգի՛ր:

Քահանան նստում է հիւանդի մօտ ժամերով. երբեմն միսիթարական զրոյցներ են լինում նորա խօսակցութիւնները և երբեմն Սուրբ Գրքի կամ ուրիշ բարոյական պատմութիւնների ընթերցումն:

Սուրբ Գիրքը քահանան իւր ձեռքովն է դրել հիւանդի զվավերելը, իսկ միւս գրքերը հետն է բերում:

Տէրտէրը խօսում է համեստութեամբ, կարգում է պարզ և դիւրբաննելի արտասանութեամբ, նորա դէմքը շարունակ ժպտածիծաղ է, նորա խօսքերը հոգեզգաց են:

Դաւիթ աղան գոհ է իւր սանից և նա տէրտէրին այլապէս չի կոչում, եթէ ոչ իմ պահապան հրեշտակո. նա երբէք մոքից չի ձգում այն երջանիկ րոպէն, երբ ինքը հանգուցեալ բիճայ Սարգսին կանչեց և ձեռքը յանձնարարական տոմսակ տալով՝ ուղարկեց փոքրիկ Արտեմի հետ Հայոց Ուսումնարանը:

Ահա՛ այն Արտեմիկն է, որ այսօր տէր Դւռնդ է դարձել և իւր երախտագիտական պարտականութիւնը սրբութեամբ կատարում դէպի իւր

բարերարները: Նա ինքն է վարձել Դաւիթ աղայի համար այս տնակը, ինչն է կերակրում և սնուցանում բաղդի դառն հարւածի թշւառ. զոհերին, տէրտէրի գուռն է գնում Դաւիթ աղայի ծառան առաւոտները և ծախքի փող ստանում, տէր Վւնդն է, որ անպակաս է անում աղայի բարձի տակից առ ձեռն ծախքերի համար փողը՝ նստած տեղից թղթաղրամի ծրարն աննկատելի կերպիւ բարձի տակը կոխելով. այդ դրամներիցն է տանում մօր շրջազգեստի փոխարէն Վասիլի:

— Ես օր էլի եկել էր մեր բարի պտուղը. էլի տարաւ մօր շրջազգեստի փոխարէն բուրլին, պատմում է սրտաբեկ որդու արկածքը տէրտէրին Դաւիթ աղան:

— Խոնդրեմ, հայրիկ, տէք անտրոտունջ, մի՛ խնացէք, քաղցր դէմք ցոյց տւէք, գուցէ հայրական գթալիր արտայայտութիւնը ներշնչի նորա սրտի խորքը, զարթացնի նորա մէջ ինքնազգացութեան իմացականութիւնը և մի օր բաղդ ունենանք անառակ որդու հօր վսեմ խօսքերն ասելու. «Իմ այս որդին մեռած էր և կեանք առաւ, կորած էր և գտնեցաւ»:

— Դորա համար անառակ որդու հօր արժանաւորութիւնը պէտք է ունենալ, ցաւագին ասում էր Դաւիթ աղան. ես զգում եմ, որ ինքս չեմ տեսնիլ. ցանկալի էր և հոգիս միմիթարւած կը լինէր, եթէ երբ և իցէ դու և մայրը տեսնէիք անբաղդ որդուս զղջումը:

— Եսատ ցաւում եմ, հայրիկ, որ մինչև այսօր անկարող եմ գտնւել Վասիլի վերաց. երբէք լուրջ չը հանդիպեցի, որ յաջողեցնեմ բան հասկացնել նորան, պատահելուս էլ միշտ փախուստ է տալիս ինձանից, այնու ամենայնիւ, յոյս իսպառ չեմ կտրել նորանից:

— Աստուած սրտինդ կատարի, հառաչալից և արտասելով պատասխանն էր լինում վշտացած ծերունու:

## Ի.

Քաղաքի մուլթ փողոցներից մէկում, մի նկուղի մէջ, մի աղտոտ սեղանի շուրջը երկու-երեք հոգի են նստած: Արբեցողի կատարելատիպն են երեքն ևս: Երեք կանաչ չարեքանոց գաւեր շարած են. մի կտոր չոր հաց և մի սոխ սեղանի համաղամքն են. հացի կէսը դիմուս է:

—Գինի՛, է՛յ, գինի՛ բեր, վերջացաւ, ձեռքով սեղանը բաղխելով՝ դրչում է նատողներից մէկը:

—Նատ, գինի հասցրո՛ւ, մեզանից բաղդաւորների կենացը պէտք է խմենք, պահանջում է երկորդը:

—Ել փող չունիք, խմաճներդ այսօր բաւական է, վեր կացէ՛ք դուրս կորէ՛ք, թէ չէ հիմի շան նման կը սատկացնեմ, սպանում է գինեվաճառը:

—Նատ մի՛ խօսիլ, գինի բե՛ր, ես ուզում եմ այս անցիշատակ մեռելի հոգու բաժակը խմել ու գնալ քեզ համար մանէթ բերել, ասաց երրորդը և վեր թռաւ, վազեց դէպի շարւած շշերը՝ աչքը յառած փողոցովն այն րոպէին անցրած ննջեցելքի կողմը:

Բաքոսի երկրպագուն մի ձեռքն արգէն հասցրել էր շշն, բայց նա յանկարծ ձեռքը յետ քաշեց, կանգնած տեղը երերաց և սարսափելի ծւոցով աղաղակեց՝ ա՛խ:

Ընկերները վեր թռան, յառաջ վազեցին, բայց մինչ նոքա մօտ կը գային իրանց ընկերին, վերջինս խելագարի նման դուրս վազեց գինետանից:

—Սպասի՛ր, սպասի՛ր, գոչեցին գնացողի ընկերները և կամեցան վաղել իրանց ընկերի ետևից, բայց տեղն ու տեղը վայր ընկան զինովութիւնից:

—Ա՛յ զարմանք, բացականչեց գինեվաճառը, Վասիլը սրանցից աւելի արրած էր ու չը գիտեմ ընչից նա բոլորովին ուշքի եկաւ ու լրջացաւ, ի՞նչպէս հաստատ քայլերով վազում էր:

## Ի Ա.

Եկեղեցումը պատարագ է, գինետան առջեկից անցրած ննջեցելքը դրւած է ամբիոնի վերաց. պատարագիչը տէր Վկոնդն է, նա շատ յուզւած էր. նա ժամից յետոց վերջին Հոգուոցն ասաց ծերունի մեռելի վերաց, չոքեց, համբուրեց նորա չորացած ձեռքը և անդորր հոգւով ու զւարթ դէմքով տեղիցը կանգնեց:

Դագաղի վերաց ընկած լալիս էր մի սեակոլոլ չափահաս տարիներով կին և չէր ուզում վեր կենալ:

Տէր Վկոնդը բարձրացնելով կնոջն՝ ասաց.

—Միսիթարւի՛ր, մայրի՛կ, հայրիկը քաւեց իւր ջահէլութեան սխալանքները։

—Եթէ սա իւր երկարատև հիւանդութիւնովը կրեց իւր ապաշխարանքը, ի՞նչ պէտք է անեմ ես՝ սորա մեղսակիցս. մեր յիմարութեան պտուղը փշի պէս ցցւած է աչքիս առաջին։

—Աստուած ողորմած է, մայրի՛կ, Վասիլը կ'ուղղւի, յուսադրեց և իւր տունն ուղարկեց տիկին Մարիամին տէր Վեռնդը ու ինքը գնաց վերջին հրաժարականը տալու իւր բարերարին։

—Այս հողն էլ օրհնեցէ՛ք, տէրտէ՛ր, դուրս եկաւ սակաւաթիւ յուղարկաւորողների միջից մի ճղճղոտած հազուսով երիտասարդ՝ մի բուռը հող գետնից վերցնելով և նախապէս իւր երեսը նոյն հողովը արորելով։

Ամենքը զարմացած անծանօթին նայեցին։

Տէր Վեռնդը, կարծես, ոգևորւեց. նա ինքն օրհնեց հողը։

Երիտասարդը հողը ձգեց ննջեցելքի երեսին և չոքեց, զլուխը դրեց նորա կրծքին և սկսաւ երկար ժամանակ հեկեկալ անմռունչ։

—Բաւական է, ո՞վ ես, վեր կա՛ց, թող դազաղը փոսն իջեցնեն, կրկնեցին մի քանի ձայներ, արդէն ժամանակ է։

Տէր Վեռնդը նրանց կանգնեցրեց.

—Համբերեցէ՛ք, ասաց նա, թո՞ղ մարդն իւր փափազն առնի։ Երիտասարդը վերջապէս երկիւղածութեամբ մի համբոյր տւեց ծերի աջին ու ինքը, առանց զլուխը բարձրացնելու, երկու ձեռքով երեսը ծածկեց ու շտապ քայլերով հեռացաւ դէպի գերեզմանատան կից բլուրը։

Տէր Վեռնդը քամակիցը վազեց, բայց չը հասաւ։

—Վասի՛լ, Վասի՛լ, կանգնի՛ր, գոչեց տէրտէրը։

Վասիլը կամ չը լսեց, կամ չը լսելու տւեց. լեռը ծածկեց նորան տէրտէրի տեսութիւնից։

## Ի՞՞ն.

Տիկին Մարիամը տէր Վեռնդի տան մի անդամն է. նա այժմ բոլորովին կերպարանափոխւել է. նա տէրտէրի տան ամրապինդ սիւնը և նորա սիրատոն զաւակների սիրող և բարեհամբոյր տանտիկինն է. տիկինով ձեռքին է քահանացի տան տնտեսութիւնը, նորան է նա-

յում ողջ տունը. աիրուհին մօր պէս սիրում է տիկին Մարիամին:

Տիկին Մարիամը գոհ է իւր վիճակից, բայց միշտ տխուր է. Վասիլին է նորա տրտութեան պատճառը:

Տէր Ղևոնդն ամեն հնարք դործ է զնում մոռացնել պառափի վշտերը, միսիթարական դէպէր է պատմում; բայց տիկինը միշտ կրկնում է.

—Այդ ամենը շատ լաւ, տէրտէր ջա՞ն, բայց մեր բարի պը-  
տուղը չը կաց. հօր մահւան օրից նորա երեսը ոչ ոք չի տեսել:

—Աղօթի՛ր և յոյսդ Աստուածանից մի՛ կտրիլ, սիրելի մայրի՛կ, միսիթարում է նորան քահանան, իմ հաստատ հաւատս ինձ թե-  
լաղրում է, որ Վասիլը կենդանի է և ուղղւած. իմ ներքին ձայնն  
ինձ ասում է, որ այսօրւայ հեղնութեամբ ասածդ բարի պտուղ  
խօսքը մի օր լիովին պէտք է յարմարի Վասիլին և դու ուրա-  
խանաս:

—Փա՛ռք իմ Աստծուն, եթէ մոլորեալ որդուս ծաղրելով ենք  
կոչում բարի պտուղ, հոգեոր որդիս միանգամայն արժանի է  
այդ անուանը, տէրտէր ջա՞ն, պատսախանում էր տիկին Մարիամը և  
զոյգ ձեռքերով բռնում քահանացի զլուխը, մի քանի անգամ կա-  
թողին համբոցներ էր դրոշմում նորա ճակատին, աչքերին, այտե-  
րին, մօրուքին և ձեռներին. հետոն էլ աչքերն երկինք սեեռած՝  
ջերմ սրտով աղօթք էր մրմնջում դէպէ Վերին Տեսչութիւնը և  
ապա թողած քահանացին, շուրջ էր ածում աչքերը դէպէ նորա  
զաւակները և արտասանուում.

—Դու պահես, Աստուա՛ծ, իմ բարի պտուղ տէրտէրին իւր  
բարի պտուղ զաւակներով ու ընտանիքով և, ի յարդանս սրանց,  
դարձ ու զղջումն տաս իմ անդարձ որդուս:

### Ի՞Գ.

Տէրտէրի յոյսը հաստատուն և աներկայ էր. տիկնոջ աղօթքն  
Աստուած լսել էր:

Տէր Ղևոնդի ստացած այսօրւայ նամակի ծրարից մի ուրիշ նա-  
մակ ևս դուրս եկաւ: Երկրորդը տիկին Մարիամ Ա...-ովին էր պատ-  
կանում:

Նամակը Վասիլիցն էր:

Նա այժմ մի յետ ընկած դիւղերից մէկի բնակիչ է. նա գեղջուկ է, ռանչպար է, ունի իւր չորս լուծք եղը, երկու կթի կովերը, իւր արօրն և տնտեսութիւնը:

Գիւղական նախրորդի աղջիկը նորա աշխատանքները բաժանող ամուսինն է: Երկու դեռահաս երեխայք երջանիկ տան զարդն են. նոքա մանկական թոթովանքով հանգիստ արքայութիւն են խընդրում իրանց պապ Դաւթին և ցանկանում են համբուրել իրանց տատի ձեռքը:

—Այս ամեն բարութիւնները, գրում է Վասիլը, իմ դառն աշխատանքի, իմ ճակատի քրանքի գինն են, իմ կոշտացած մատների արդիւնքն են, բողորը մշակութիւնով եմ ձեռք բերել:

### Ի՞՞ս.

—«Երի՛ր ինձ, սիրելի տէրտէր ջա՞ն, ասաց տիկին Մարիամը, թոյլ տուր ինձ կեանքիս վերջին օրերն անցկացնել Վասիլիս մօտ և աղօթել իմ հոգեոր և մարմնաւոր զաւակների՝ իմ երկու բարի պտուղների երջանկութեան համար:

Տիկինը տէր Նեռնդի և իւր ընտանեաց քաղցր գգւանքով ճանապարհ ընկաւ դէպի հեռու երկիր. հողը նորան քաշեց դէպի իւր նախնեաց շիրիմները: